ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բանավոր խոսքի զարգացման հիմնահարցը ձևաբանական իրողություններ ուսումնասիրելիս

Կատարող՝ Մելանյա Ալեքսանի Մաթևոսյան

/Անուն, ազգանուն, հայրանուն/

Ղեկավար՝ Շողիկ Սարգսյան մ.գ.թ., դոցենտ

/Անուն, ազգանուն, հայրանուն/

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1

Խոսքի և հաղորդակցության զարգացման առանձնահատկությունները 5

1.1. Խոսքի զարգացման մեթոդական սկզբունքները 5

1.2 Լեզվազգայունակության սկզբունք..... 6

1.3 Խոսքի տարբեր կողմերի համակցման սկզբունք..... 7

1.4 Բառապաշարի զարգացում 9

ԳԼՈՒԽ 2

Խոսքյին հաղորդակցումը՝ որպես անձնավորության ձեվավորման միջոց 11

2.1 Խոսքի զարգացման հիմնական խնդիրները 11

2.2 Բանավոր խոսք 12

2. 3. Խոսքային դրսեվորումների զարգացումը 16

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Խոսքը կարևորագույն հոգեկան գործառույթ է, որի միջոցով իրականացվում է հաղորդակցում այս կամ այն լեզվով: Եթե երեխաների լսողությունը և մտավոր ունակությունները պահպանված են, սակայն նկատվում են խոսքի խանգարումներ, ապա մասնագետները նրանց դասում են «խոսքի խանգարումներ ունեցող երեխաների» խմբին: Դ. Բաթթլեն (1998) տարբերակում է «խոսքի խանգարում» և «տարբերվող խոսք» հասկացությունները: Տարբերվող խոսքը միշտ չէ, որ խանգարված խոսքն է, օրինակ՝ այս կամ այն լեզվի հնչյունային, քերականական, շարահյուսական օրինաչափություններին չհամապատասխանող խոսքը հաճախ կարող է լինել բարբառի, ոչ թե խոսքի խանգարման դրսևորում:

Այսօր աշխարհում, որպես գլոբալիզացման ու աճող արտագաղթի դրսևորում, ավելանում է խոսքի խանգարումները, որոնք կարող են դրսևորվել և՛ որպես զարգացման բազմազան խանգարումների հետևանք, և՛ որպես առանձին, առաջնային խանգարում: Վերջին տարիներին ուսուցիչների և լոգոպեդների պրակտիկայում բավականին մեծ թիվ են կազմում դպրոցական ծրագիրը դժվարությամբ յուրացնող, բանավոր խոսքում՝ կարդալու և գրելու գործընթացում կայուն և կրկնվող բնույթի սխալներ ունեցող սովորողները: Բանավոր խոսքի խանգարումներն առավելապես բնորոշ են մտավոր զարգացման խանգարումներ ունեցող սովորողներին, քանի որ վերջիններս, ունենալով գլխուղեղի օրգանական ախտահարում և դրանով պայմանավորված՝ ճանաչողական գործունեության կայուն խանգարում, որպես երկրորդային դրսևորումներ, ունեն նաև խոսքի՝ կարդալու և գրելու գործընթացների խանգարումներ՝ դիսլեքսիա և դիսգրաֆիա: Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող տարրական դասարաններում սովորողների բանավոր խոսքի շտկմանը կարող է նպաստել այդ նպատակին միտված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների օրինակելի համակարգը՝ մշակված գրավոր խոսքի խանգարումների բազմակողմանի և խորը ուսումնասիրման ու վերլուծության ճանապարհով:

Բանավոր խոսքի զարգացման հարցերը միշտ էլ հետաքրքրել են մարդկությանը: Դեռևս հին հույն փիլիսոփաները (Պլատոն, Արիստոտել), հռոմեացի մանկավարժ Մարկ Ֆաբիյեյ Քվինթիլիանոսը, Վերածննդի դարաշրջանի հայ մանկավարժ

Հովհաննես Սարկավագ Իմաստասերը և ուրիշներ իրենց աշխատություններում անդրադարձել են այդ հարցերին:

Երեխաների բանավոր խոսքի զարգացումը կապված է երեխաների անհատական առանձնահատկություններից, տարբեր է նաև նրանց խոսքի զարգացման ընթացքը: Երեխաների մի մասը ուշ է խոսում, ոմանք հասկանում են շրջապատի խոսքը, բայց չեն արտահայտվում: Երեխայի խոսքը ամենից առաջ զարգանում է շրջապատի հետ հաղորդակցման ընթացքում: Ուստի կարևոր է շրջապատող մարդկանց գրագետ, ճիշտ խոսքը, երեխայի խոսքի ձևավորման ղեկավարումն ու վերահսկումը:

Խոսքի խանգարումները կարող են դրսևորվել և՛ որպես զարգացման բազմազան խանգարումների հետևանք, և՛ որպես առանձին, առաջնային խանգարում: Ամերիկյան «Խոսք-լեզու-լսողություն ասոցիացիան» (The American Speech-Lenguage-Hearing Assosiation /ASHA/, 1993) խոսքի և հաղորդակցման խանգարումները բաժանում է երկու խմբի՝ խոսքի խանգարումներ և լեզվի խանգարումներ: Ըստ այս ասոցիացիայի՝ խոսքի խանգարումները պայմանավորված են հնչարտասանության, ձայնարձակման, շնչառության խանգարումներով, իսկ լեզվի խանգարումները՝ տեղեկատվությունն ընկալելու, մտքերը ձևակերպելու ու վերարտադրելու դժվարություններով:

Ուսումնասիրվող նյութը ցույց է տալիս, որ երեխայի երկար ժամանակ մակապարտեզում գտնվելը բարենպաստ պայմաններ է ստեղծում նրա խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների համար:

Խոսքը երևան է գալիս մարդու՝ այլ մարդկանց հետ հղորդակցվելու պահանջմունքից: Այդ պատճառով երեխայի ներառումը սոցիալական միջավայրի մեջ և նրա սոցիալական կապերի պլանավորված ընկալումը համարվում են նրա խոսքի զարգացման հիմնական պայմաններից մեկը, երեխաների բանավոր խոսքի զարգացումն իրականանում է գործունեության ընթացքում, և խոսքի զարգացման շարժիչ ուժը համարվում է հաղորդակցման անհրաժեշտությունը:

Շատ կարևոր է , որ նախադպրոցական հաստատություններում երեխայի բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները իրականացվեն ոչ միայն նմանակման մեթոդի հիման վրա, այլ նաև բառի իմացության ստեղծագործական կազմակերպման վրա:

Բանավոր խոսքի զարգացման լավագույն մեթոդ է խաղը: Հենց խաղի ժամանակ է երեխան սովորում ընդհանրացնել առարկաներն ու գործողությունները, օգտագործում բառի ընդհանրացված նշանակությունը: Խաղի մեջ ներգրավվելը երեխայի համար պայման է ստեղծում մտավոր գործունեության զարգացմանը:

Երեխան 4 տարեկանում առանց հատուկ կրթության մեծերից յուրացնում է լեզուն: Մինչխոսակցական փուլում նրա մոտ նկատվում է բղավոց, նվնվոց, թոթովանք, մոդուլացված թոթովանք: Հնչյունական լսողության զարգացումը հնարավորություն է տալիս երեխային յուրացնել հնչյունները: Կես տարեկանում նրա մոտ առաջանում են ձայնարկություններ, երկու տարեկանում՝ բառակապակցություններ (երկբառ արտահայտություններ), և սկսում է յուրացնել քերականություն: Երկու տարեկանում երեխան արդեն պետք է հստակ հասկանա առարկաների, գործողությունների նշանակությունը, պատասխանի ծնողների կողմից տրված հարցերին: Երբ ծնողները իրենց հետ կապված որևէ պատմություն են պատմում, ապա երեխան պետք է կարողանա այն վերապատմել, պատասխանել պատմողի հարցերին: Դրանից բացի երեխան պետք է հեշտությամբ ցույց տա մարմնի հինգ մասերը՝ այդ թվում հստակ իմանա դրանց նշանակությունները: Շփվելով մեծերի հետ՝ երեխան արդեն կարողանում է խոսել մի քանի բառից կազմված նախադասություններով, իսկ զրույցի մեջ գործածվում են դերանուններ, մակբայներ, ածականներ: Երեք տարեկանում երեխայի բառապաշարը բազմապատկվում է և կարող է ընդգրկել 1000-1500 բառ

ԳԼՈՒԽ 1

ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է: Հետևաբար հատկապես նախադպրոցական երեխայի մայրենի լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումը: Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝

- ճիշտ արտահայտվելու կարողությունը,
- բանավոր խոսքի հարուստ բովանդակությունը:

Խոսքի զարգացումը հոգեկան բարձր իմացական գործընթաց է և սերտորեն կապված է մտածողության հետ: Խոսքն ունի զարգացման իր փուլերը, որոնք ընթանում են երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

1.1. Խոսքի զարգացման մեթոդական սկզբունքները

Երեխայի բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևը բնական հաղորդակցումն է: Դրա համար պետք է երեխայի համար ստեղծել բնական հաղորդակցության ձևեր: Երեխայի ցանկացած գործունեության ժամանակ պետք է քաջալերել երեխայի արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տալ երեխային ազատ, անկաշկանդ խոսելու, քանի որ, որքան մեծ է երեխայի արտահայտվելու, խոսելու ցանկությունը, այնքան մեծ է նրա խոսքի հղկված լինելը:

Երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է ոչ միայն ընդհանուր դիդակտիկական, այլև որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվելիս դաստիարակն ընտրում է համապատասխան մեթոդները, հնարքներն ու միջոցները: Այդ սկզբունքները ելնում են երեխայի լեզվի և խոսքի յուրացման օրինաչափություններից և արտացոլում են մայրենի լեզվի ուսուցման առանձնահատկությունները, լրացնում դիդակտիկական սկզբունքները:

Մանագետներն առաջարկում են մայրենի լեզվի ուսուցման հետևյալ սկզբունքները.

Երեխայի զգայական, մտավոր և խոսքի զարգացման փոխկապակցվածության սկզբունք հիմնվում է խոսքի, որպես լեզվամտածողական գործունեության վրա, որի զարգացումը սերտ կապված է շրջապատող աշխարհի ընկալման հետ: Խոսքը

հիմնվում է մտածողության հիմք հանդիսացող զգայական պատկերացումների վրա և զարգանում մտածողության հետ համատեղ: Հարստացնելով երեխայի գիտակցությունը շրջապատող աշխարհի հասկացություններով, մենք զարգացնում ենք նաև նրա խոսքը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև մտածողության առանձնահատկությունները, այսինքն՝ զարգացումը պետք է ընթանա կոնկրետ մտածողությունից դեպի վերացականը, պարզից դեպի բարդը:

Հաղորդակցական գործունեության սկզբունքը

Խոսքային գործունեությ ան ընթացքում լեզուն հաղորդակման միջոց է: Այս սկզբունքը ենթադրում է, որ երեխայի խոսքի զարգացումը՝ որպես հաղորդակցման միջոց ամենից արդյունավետ տեղի է ունենում գործունեության ընթացքում: Դա նշանակում է նաև, որ երեխայի գործունեությունն այնպես պետք է կազմակերպել, որ այն նպաստի նրա խոսքային հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

1.2 Երեխայի զգայական, մտավոր և խոսքի զարգացման փոխկապակցվածության սկզբունք.

Այս սկզբունքը հիմնվում է խոսքի, որպես լեզվամտածողական գործունեության վրա, որի զարգացումը կապված է շրջապատող աշխարհի ընկալման հետ: Խոսքը հիմնվում է մտածողության հիմք հանդիսացող զգայական պատկերացումների վրա և զարգանում մտածողության հետ համատեղ: Հարստացնելով երեխայի գիտակցությունը շրջապատող աշխարհի հասկացություններով, մենք զարգացնում ենք նաև նրա խոսքը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև մտածողության առանձնահատկությունները, այսինքն՝ 7 զարգացումը պետք է ընթանա կոնկրետ մտածողությունից դեպի վերացա - կանը, պարզից դեպի բարդը:

1.2 Լեզվազգայունակության սկզբունք

Լեզվազգայունակությունը լեզվի օրինաչափությունների չգիտակցված, ենթա-գիտակացական տիրապետումն է: Խոսքի համակողմանի ընկալման գործընթացում երեխայի մեջ ենթագիտակցական մակարդակում ձևավորվում են զուգադրություններ (անալոգիաներ), որոնց շնորհիվ նա յուրացնում է նաև խոսքի օրինաչափությունները: Երեխաներն սկսում են ավելի ազատ օգտվել լեզվի ձևերից, տարրերից, նրանց մեջ ծնվում են բառերը, բառակապակցությունները մտապահելու և խոսքային հաղորդակցման տարբեր իրադրություններում օգտագործելու կարողություն:

Երեխայի խոսքի զարգացման հիմքում ընկած է ոչ միայն մեծերին ընդօրինակելը, այլ նաև լեզվական երևույթների գիտակցական ընկալումը: Երեխայի մեջ ձևավորվում է ճիշտ խոսքային վարքագծի ներքին համակարգ, որը թույլ է տալիս նրան ոչ միայն կրկնել, այլև գիտակցել խոսքային արտահայտությունները: Լեզվի ուսուցման հիմքում ընկած է խոսքային ընդհանրացումների և ստեղծագործական ունակությունների ձևավորումը: Միայն մեխանիկական կրկնությունները բավարար չեն լեզուն յուրացնելու համար: Լեոնտևն առանձնացնում է խոսքի գիտակցման ընկալման հետևյալ ձևերը.

ազատ խոսք,

խոսքի մասերի գիտակցում,

սեփական խոսքի գիտակցում:

1.3 Խոսքի տարբեր կողմերի համակցման սկզբունք

Այս սկզբունքն իրականացվում է լեզվի բոլոր մակարդակների յուրացման և դրանց սերտ փոխկապակցման միջոցով: Խոսքի տարբեր խնդիրների յուրացումը լեզվի համակարգի տիրապետման գործընթաց է: Խոսքի յուրաքանչյուր խնդրի ուղղությամբ տարվող աշխատանքն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է նաև խոսքի մյուս կողմերի ձևավորմանը:

Խոսքային գործունեության դրդապատճառների հարստացման սկզբունք

Խոսքային գործունեության ընթացքում կարևորագույն դեր է խաղում դրդաատճառը: Երեխայի համար խոսելը, խոսքային գործունեությունը պետք է պատճառաբանված ու անհրաժեշտ լինի: Այդ պատճառով էլ մեծ նշանակություն ունի երեխայի խոսքային գործունեության դրդապատճառների հարստացումը:

Սա ենթադրում է, որ երեխայի խոսքը զարգանում է նրա ամենօրյա հաղորդակցման ընթացքում, այսինքն՝ երեխայի համար խոսելու, հաղորդակցվելու բնական և իրական դրդապատճառները պետք է լինեն շփվելու, իմանալու, տպավորությունները կիսելու, իր այս կամ այն կարիքը հոգալու բնական պահանջմունքներները:

Ուստի երեխայի հետ շփումը, ինչպես նաև պարապմունքները պետք է կառուցվեն բնական հաղորդակցման վրա, քանի որ բնական հաղորդակցման ընթացքում հաշվի է առնվում երեխայի ցանկությունը, հետաքրքրությունները, ինչը խոսքային

գործունեության բնական դրդապատճառներ է ծնում և բարձրացնում արդյունավետությունը:

Դաստիարակի խնդիրն է ստեղծել այնպիսի իրավիճակներ, երբ երեխան հաղորդակցվելու պահանջ ունենա, և ուսուցման յուրաքանչյուր գործողություն պարունակի դրական մոտիվ:

Ակտիվ խոսքային կիրառում ապահովող սկզբունք. Այս սկզբունքի էությունն այն է, որ լեզուն յուրացվում է կիրառման ընթացքում, խոսքային պրակտիկայում: Այլ կերպ ասած՝ «Խոսել սովորում են խոսելով»: Խոսքի ակտիվությունը երեխայի խոսքի զարգացման կարևոր պայմաններից է: Խոսքի ակտիվությունը ոչ միայն խոսելն է, սեփական մտքերն արտահայտելը, այլ նաև լսելն ու ընկալելը: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է կիրառել երեխայի խոսքի ակտիվացման տարբեր գործոններ. հուզական դրական մթնոլորտ, հաղորդակցում, դիդակտիկ խաղային հնարների կիրառում, հանձնարարություններ և այլն:

1. Երեխայի խոսքի զարգացման նպատակն ու խնդիրները

Լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է: Հետևաբար հատկապես նա-խադպրոցական երեխայի մայրենի լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումը:

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝

ճիշտ արտահայտվելու կարողությունը,

բանավոր խոսքի հարուստ բովանդակությունը:

Երեխայի խոսքը կարող է զարգանալ մի քանի մակարդակներում.

2.Կառուցվածքային, որը ենթադրում է լեզվի համակարգի տարբեր մակարդակների ձևավորում՝ հնչյունաբանական (հնչյունների ճիշտ արտաբերում), քերականական (քերականորեն խոսքի ճիշտ կառուցում):

Ֆունկցիոնալ, ենթադրում է հաղորդակցական խոսքի զարգացում, կապակցված խոսքի ձևավորում, այսինքն՝ մենախոսական կարողությունների (երբ երեխան ինչ-որ բան է պատմում) և երկխոսական կարողությունների զարգացում:Ճանաչողական կամ կոգնիտիվ, երբ լեզուն և խոսքը ծառայում են իմացությանն ու ճանաչողությանը, այսինքն՝ գիտելիքներ ձեռք բերելուն:

Լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապակցություն, նախադասություն, տեքստ:

Ըստ այդմ էլ, երեխայի խոսքի զարգացման խնդիրները կարող են լինել.

խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում,բառապաշարի զարգացում,խոսքի քերականական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի ընկալման ձևավորումը,կապակցված խոսքի զարգացում (մենախոսություն և երխոսություն)խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորումգեղարվեստական գրականության հետ ծանոթացում:

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը

Սա բազմակողմանի խնդիր է և կապված է հնչյունների յուրացման և արտաբերման հետ: Այն նախատեսում է

խոսքային լսողության զարգացում,ճիշտ հնչարտաբերում,խոսքի արտահայտչական միջոցների տիրապետում. (ուժգնություն, առոգանություն, հնչերանգ, տեմպ):

Նախադպրոցական տարիքը ամենաբարենպաստ ժամանակահատվածն է խոսքի հնչյունային կուլտուրայի զարգացման համար:

1.4 Բառապաշարի զարգացում

Քանի որ բառը խոսքի զարգացման կարևոր միավոր է, ապա բառապաշարի տիրապետումը երեխայի խոսքի զարգացման հիմքն է: Բառապաշարում արտացոլվում է խոսքի բովանդակությունը: Բառերը ցույց են տալիս առարկաներ, երևույթներ, նրանց միջև գոյություն ունեցող կապեր, գործողություններ, առարկաների որակներ, հատկանիշներ: Յուրացնելով բառերը՝ երեխան, իրականացնում է շրջապատի հետ հաղորդակցման խնդիրներ: Մանկան բառապաշարի զարգացման մեջ կարևոր են բառի նշանակության յուրացումը, նրա տեղին օգտագործումը տարբեր իրադրություններում և հաղորդակցման մեջ:

Քերականական կառուցվածքի ձևավորումը

Առանց քերականության հնարավոր չէ խոսքային ճիշտ հաղորդակցում: Սա երեխայի համար բարդ է ընկալելը, ուստի նա լեզվի քերականական կողմը յուրացնում է գործնականում՝ մեծահասակի խոսքի ընդօրինակման և լեզվական ընդհանրացում-ների շնորհիվ:

Այն ներառում է մենախոսության և երկխոսության կարողությունների զարգացում: Կապակցված խոսքը սկսում է ձևավորվել այն ժամանակ, երբ երեխան հաղորդակցվելու կարիք է ունենում: Ուստի կապակցված խոսքի ձևավորումը սկսում է երկխոսության կարողությունների զարգացումից: Երկխոսությունը նախադպրոցականի շփման հիմնական ձևն է: Կարևոր է երեխային սովորեցնել լսել և հասկանալ դիմացինի խոսքը, միտքըձևակերպել իր միտքը, երկխոսությունը առաջ տանել,հարցեր տալ և պատասխանել՝ օգտվելով լեզվական տարբեր միջոցներից:

Մենախոսության զարգացումը նախատեսում է տեքստը հասկանալու, վերապատմելու և այն ինքնուրույն կառուցելու կարողություն:

Խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորում

Այն երեխայի նախապատրաստում է լեզվի յուրացման գրաճանաչության փուլին: Դաստիարակը զարգացնում է բանավոր խոսքը, աշխատանք տանում բառերի հնչյունական վերլուծության ուղղությամբ, գիտակցաբար վերլուծում է բառը, վանկը, նախադասությունը:

Խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի նաև գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այն մեծ նշանակություն երեխայի անձի ձևավորման համար որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորումը:

Խոսքի զարգացման գործընթացում առանձնապես շեշտադրված է երեխաների հաղորդակցման լիիրավությունը, շրջապատի մարդկանց հետ հարաբերությունները կարգավորելու ունակությունը, հնչյունային մշակույթի զարգացումը ինչի կարիքն առանձնապես շատ ունեն ժամանակակից երեխաները:

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՔՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

2.1 Խոսքի զարգացման հիմնական խնդիրները

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝

- խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը,
- բառապաշարի ձևավորումը,
- խոսքի քերականական կառուցվածքի յուրացումը,
- կապակցված խոսքի զարգացումը,
- ծանոթացումը գեղարվեստական գրականությանը:

Երեխայի համար լավ կապակցված խոսքը հաջող գրագիտության և զարգացման բանալին է: Գեղարվեստական ընթերցանության վերաբերյալ զրույցները անհրաժեշտություն են նախադպրոցականների առօրյայում: Դրանք երեխային օգնում են տրամաբանելու, գեղագիտորեն ընկալելու գրական ստեղծագործության իմաստը: Նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի մշակումը հիմնականում տեղի է ունենում երկխոսության և մենախոսության ուսուցման շնորհիվ:

Երկխոսության ձևավորման կարևոր նախապայման է դաստիարակի և երեխայի շփումը: Նախադպրացական տարիքում կապակցված խոսքի զարգացումը տեղի է ունենում աստիճանաբար, մտածողության զարգացմանը համընթաց:

Ավագ նախադպրոցական տարիքում կարևորվում է հատկապես կապակցված խոսքի զարգացումը:

Երկխոսության մշակումը երեխայի հաղորդակցման անհրաժեշտ ունակությունների զարգացման նպատակ է հետապնդում: Երկխոսության մեջ մտնելը պահանջում է այնպիսի բարդ կարողություններ ինչպիսիք են՝ լսել և ճիշտ հասկանալ զրուցակցի արտահայտած մտքերը, սեփական դատողություններն արտահայտել հստակ և շարահյուսորեն ճիշտ, պահպանել որոշակի հուզական տոն, լսել սեփական խոսքը:

Ի տարբերություն լեզվի, որը խոսողական ունակությունների ընդհանրական համակարգ է, **խոսքը** այդ համակարգի կոնկրետ, անհատական իրացումն է, լեզվի կենդանի շունչը, որ դրսևորվում է խոսքային գործունեության միջոցով,

խոսքային ակտերով: Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով. լեզուն և խոսքը սերտ կապակցված են: Խոսքը բնորոշ է նրանով, որ այն նյութական կողմ ունի, ընկալելի է զգայարաններով (լսողությամբ, տեսողությամբ, շոշափելիքով), իրականության հետ համապատասխանության տեսանկյունից կարող է լինել ճիշտ կամ սխալ: Այն անկրկնելի է, իրացվում է կապված **հաղորդման որոշակի նպատակների** հետ, հարմարեցվում է իրադրության հետ, արտադրողականությամբ սահմանափակ չէ, իրացվում է որոշակի անհատի կողմից, պայմանավորված է անհատի ստեղծագործական ակտիվությամբ և նպատակադրումներով: **Հաղորդակցությունը** տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով (ժեստեր), դեմքի արտահայտություններով, խոսքով, մամուլի կամ էլեկտրոնային փոստի հաղորդագրություններով, հեռախոսով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով:

2.2 Բանավոր խոսք

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում: Պայմանավորված է խոսքային իրադրությամբ, հաղորդակցվողների փոխհարաբերությամբ: Կարևոր են նաև ուղեկցող միջոցները (միմիկա, շարժուձև և այլն): Հիմնականում բարձրաձայն խոսողություն է, կարող է ձայնագրվել, վերարտադրվել, հաղորդվել տեխնիկական միջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, հեռախոս):

Երեխայի խոսքի զարգացումը ստեղծագործական երևակայության միջոցով

Երեխաների զարգացման ոլորտում կարևոր է առանձնացնել նրա խոսքը և ստեղծագործական երևակայությունը, որի շնորհիվ նա կարող է ինքն իր խոսքով ստեղծագործել, երևակայել, նկարագրել այս կամ այն գործողությունը: Բանավոր խոսքի զարգացումը օգնում է երեխաներին արտահայտելու և մեկնաբանելու իրենց մտքերը, զգացմունքները, ինչպես նաև արձագանքելու ուրիշների գաղափարներին և գործողություններին: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով: Բանավոր խոսքի, հաղորդակցման լավագույն միջոցը **զրույցն է:** Զրույցի թեմա կարող է դառնալ երեխայի անձը: Երեխաների ստեղծագործական մտածողությունը կարելի է խթանել՝

ապահովելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ նրանք կարող են փորձել, սխալվել, շտկել:

Սեփական անձի գիտակցումը և սեփական անձի դրական ընկալումը ձևավորվում է ուրիշների հետ շփումի դրական փորձառության արդյունքում:

Երեխայի հոգեկան բոլոր գործընթացները (հիշողություն, ուշադրություն, մտածողությունը) ձևավորվում են խոսքի միջոցով: Խոսքը հոգեկան բարդ գործընթաց է, որի զարգացումը կախված է մի շարք պայմաններից:

Երեխայի խոսքին զարգացման հարցում կարևոր է շրջապատի, միջավայրի ներգործությունը: Երեխան սովորում է խոսել՝ ընդօրինակել մեծահասակներին, որոնք պետք է նպաստեն երեխայի ճիշտ, հստակ խոսքի ձևավորմանը: Երեխան վաղ տարիքից լսելով մաքուր, գեղեցիկ, ճիշտ խոսք՝ արդյունքում ձեւավորում է սեփական ճիշտ խոսքը:

Հոգեբան-մանկավարժներն առանձնացնում են երեխայի խոսքի զարգացման հետեւյալ փուլերը՝

- նախապատրաստական շրջան,
- խոսքի ստեղծման փուլ,
- խոսքային հաղորդակցման զարգացման շրջան:

Համառոտ անդրադառնալով առաջին երկու փուլերին՝ փորձենք մանրամասն ներկայացնել նախադպրոցականի խոսքային հաղորդակցման զարգացման շրջանը և առաջ քաշել այդ հիմնահարցի ժամանակակից հոգեբանամանկավարժական մոտեցումները՝ անձնավորության ձևավորման հարցում:

Նախապատրաստական կամ մինչխոսքային փուլն ընդգրկում է կյանքի առաջին տարին, որը թեև մարդկային կյանքի տևողության համեմատությամբ մեծ չէ, բայց անչափ կարևոր նշանակություն ունի երեխայի խոսքային գործառույթի զարգացման համար: Կյանքի 1-ին տարվա ընթացքում երեխան տիրապետում է մեծահասակի հետ հաղորդակցման երկու ձեւերի՝ իրադրային-անձնական և իրադրային-գործնական: Արդեն 2 ամսականում նա իր մտերիմ հարազատների հետ ձևավորում է իրադրային-անձնական հաղորդակցում: Այն բնորոշվում է հետևյալ կերպ, երեխայի հաղորդակցվելու պահանջի էությունը պայմանավորվում է մեծահասակների

բարյացակամ վերաբերմունքով, իսկ հաղորդակցման առաջատար դրդապատճառն անձնայինն է:

Շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման հիմնական միջոց է համարվում արտահայտչամիջոցների դրսևորումը: Իրադրային-գործնական հաղորդակցումն իրականացվում է վեց ամսականից, երբ երեխան տիրապետում է բռնելու գործողությանը: Իրադրային-գործնական հաղորդակցումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով

ա. հաղորդակցումն իրականացվում է առարկայական այնպիսի գործողություններով, որոնք երեխայի գործունեության նոր ձևի դրսևորումներ են և ունեն առաջատար դերակատարում:

բ. հաղորդակցման պահանջմունքի բովանդակությունը հարստանում է նոր բաղադրամասով. շրջապատող մեծահասակների հետ համատեղ գործելու ձգտմամբ, երբ պահպանվում է նաև մեծահասակների բարյացակամ վերաբերմունքը:

գ. հաղորդակցման դրդապատճառներից կարևորվում է գործնականը, քանի որ երեխաներն իրենք են փնտրում շփումներ մեծերի հետ:

դ. երեխաների համար կերպարվեստային գործունեությունը շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման հիմնական միջոցներից է:

Կյանքի առաջին տարվա վերջում երեխան մեծահասակի հետ մտնում է ավելի բարդ փոխներգործության մեջ, որի արդյունքում դրսևորվում է շփման նոր միջոցների պահանջ: Այն ապահովում է մեծերի հետ լիարժեք փոխըմբռնում: Երեխան կարող է երկար ժամանակ խաղալ որևէ խաղալիքով, օրինակ, խորանարդիկով և չիմանալ, թե այն ինչպես է կոչվում, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա: Այդ մոդումը երեխայի մեջ արթնացնում է մեծահասակը՝ միջամտելով խաղին և իր խոսքում նշելով, որ դա խորհանարդիկ է: Որպեսզի երեխան իր նախաձեռնությամբ սկսի խոսել, նրա մեջ պետք է մեծահասակի հետ շփվելու պահանջ առաջանա, որը հնարավորություն է ստեղծում անվանել տվյալ առարկան, արտասանել անհրաժեշտ բառը:

Հաջորդ փուլը, ինչպես նշել ենք, **խոսքի ստեղծման շրջանն է:** Այն ծառայում է որպես անցումային աստիճան՝ մինչխոսքային եւ խոսքային շրջանների միջեւ, և տևում է մեկ տարեկանից մինչև երկու տարեկանը: Ինչո՞վ է բնորոշ այդ շրջանը: Նախ՝ երեխան հասկանում է շրջապատող մարդկանց խոսքը և սկսում թոթովել: Նա արդեն

թեթևակիորեն ըմբռնում է, որ հնչյունների համակցումը կարող է որոշակի առարկա նշանակել: Հասկանում է, որ այդ կերպ կարելի է հասնել ինչ-որ բանի, օրինակ՝ ամ-ամ-ուտել, մա՛մա – կանչել մայրիկին և այլն:

Այժմ անցնենք **խոսքային հաղորդակցման զարգացման փուլի** հանգամանալից քննարկմանը: Այս շրջանի հիմնական ձեռքբերումներն են՝ հաղորդակցման բովանդակության փոփոխությունը և դրան համապատասխան՝ խոսքի գործառույթի զարգացումը՝ որպես հաղորդակցման միջոց և խոսքային միջոցների տիրապետում: Երեխայի ճանաչողական հետաքրքրությունների բավարարումը հանգեցնում է շրջապատող միջավայրին նրա լիարժեք ծանոթացմանը, որն ուղղված է սոցիալական աշխարհի առարկաներն ու երևույթները մարդու կողմից ուշադրության արժանացնելու պահանջին:

Երկու տարեկան Հեղինեն, որը մանկապարտեզ է հաճախում, օրվա ընթացքում թուղթ ու մատիտով քանիցս մոտենում է մայրիկին և խնդրում նկարել ծաղիկ, տուն, ձուկ, աղջիկ, տիկնիկ: Այդ ընթացքում վերակառուցվում է նաև երեխաների հաղորդակցման ձևը: Այն դառնում է *արտահիրադրային—անձնական:* Արդ դեպքում անձնական հաղորդակցումն ընթանում է առաջատար գործունեության՝ խաղի միջոցով: Երեխաների շփման պահանջմունքի բովանդակությունը համարվում է մեծահասակի հետ փոխըմբռնման պահանջ: Երեխայի գնահատումների համընկնումը մեծերի կարծիքներին նրա համար ծառայում է որպես բարոյական որակների (արժանապատվության, ինքնուրույնության) չափանիշ: Խաղի ընթացքում խոսքային հաղորդակցումը հնարավորություն է ստեղծում վերացնել երեխաների ցրվածությունը և վախի զգացումը, որոնք կարող են խաղի մեջ չընդգրկվելու պատճառ դառնալ: Հասակակիցների և մեծահասակների հետ խոսքային հաղորդակցումն անհրաժեշտ է իրականացնել ջերմության, քնքշության, ուշադրության, փոխօգնության և համակրանքի մթնոլորտում:

2. 3. Խոսքային դրսեվորումների զարգացումը

Գեղեցիկ և ճիշտ խոսքը միշտ էլ զարդարում է մարդուն: Պարզ և հստակ արտահայտված խոսքը վկայում է տվյալ անձի մտավոր զարգացածության մասին: Ցավոք, այսօր մեր իրականության մեջ հաճախ ենք լսում աղճատված, ոչ ճիշտ կապակցված, անտրամաբանորեն շարադրված խոսք: Խոսքը զարգանում և կատարելագործվում է տարիքային բոլոր փուլերում՝ սկսած վաղ նախադպրոցական տարիքից: Ուստի, այսօր գոյություն ունեցող «խոսքային աղճատումների» պատճառը պետք է փնտրել մանկության շրջանում: Անհրաժեշտ է բացահայտել, թե ինչպես է իրականացվել երեխայի կողմից խոսքի յուրացման ու կազմակերպման գործընթացը: Այստեղից էլ առաջանում է այն ճիշտ կազմակերպելու խնդիրը:

Դեռեւս վաղ մանկության տարիներին դրվում է բանավոր խոսքի զարգացման հիմքը բոլոր՝ հնչարտասանության, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի զարգացման և քերականական կողմի յուրացման առումներով: Լեզվին տիրապետելուց առաջ երեխան անցնում է մինչխոսքային փուլ, որն իր հերթին բաժանվում է նախաթոթովանքի և թոթովանքի շրջանների:

Կյանքի 1-ին և 2-րդ ամիսներին երեխան միայն լաց լինելով է դրսևորում իր վիճակը: Սկսած 2-րդ եւ 3-րդ ամիսներից՝ նա սկսում է արտաբերել ձայներ, որոնք կազմված են 1-2 ձայնավոր և նույնքան էլ անորոշ հնչյուններից: 4 ամսականից՝ երեխայի արտաբերած հնչյունները դառնում են հաստատուն: Դրանով էլ սկսվում է թոթովանքի շրջանը: Երեխան սկսում է վանկեր արտաբերել և հակադրել դրանցում եղած ձայնավոր և բաղաձայն հնչյունները: Մինչ մայրենի լեզվով առաջին բառերն արտասանելը երեխան անցնում է խոսքի զարգացման պասիվ փուլ: Այս շրջանում երեխան դեռևս խոսել չի կարողանում, բայց հասկանում է իրեն ուղղված բառերն ու պարզ նախադասությունները: Կյանքի առաջին տարում տեղի ունեցող ոչ խոսքային հաղորդակցումը խոսքի հետագա յուրացման ու զարգացման հիմք է: Այդ ընթացքում երեխան իրականացնում է հուզական հաղորդակցման երկու տեսակ.

1. Իրադրական-անձնային հաղորդակցում մոտ հարազատների հետ՝ սկսած երկու ամսականից:

2. Իրադրական-գործնական հաղորդակցում՝ սկսած վեց ամսականից:

7-8 ամսական թոթովախոս երեխան կրկնում է մեկ ձայնավորից և մեկ բաղաձայնից կազմված զուգորդությունների շարք. կազմվում են առաջին բառերը: Այս շրջանում է, որ երեխան հնչյուններն անջատ-անջատ արտասանելու կամ թոթովելու փուլից անցնում է միտք կամ իմաստ արտահայտող բառերի արտաբերմանը և ձեռք բերում խոսելու կարողություն:

Աստիճանաբար երեխան իրականացնում է առարկայական գործունեություն, և նրա խոսքը ձեռք է բերում առարկայական նշանակություն: Նա մեկ բառով անվանում է արտաքնապես իրարից տարբեր, բայց որևէ էական առանձնահատկությամբ կամ գործողության եղանակով նման առարկաները: Հետևապես՝ խոսքը ձեռք է բերում ընդհանրացնող բնույթ: Այս տարիքում խոսքի զարգացումն ընթանում է երկու ուղղությամբ.

Կատարելագործվում է մեծահասակի խոսքի ընկալումը:

Ձեւավորվում է երեխայի սեփական, ակտիվ խոսքը:

Կատարելագործվում են խոսքի բոլոր կողմերը: Երեխայի բառապաշարը հարստանում է խոսքի տարբեր մասերով, և նա դրանք նախադասության մեջ սկսում է ճիշտ օգտագործել: Արդյունքում երեխան տիրապետում է համատեքստային խոսքին, ուր բավական շատ է նկարագրվում իրավիճակը:

Կրտսեր և միջին տարիքային փուլում փոխվում են հաղորդակցման բովանդակությունը, խնդիրներն ու պայմանները: Հաղորդակցման իրադրական-գործնական ձևին հաջորդում է ոչ իրադրային-ճանաչողական ձեւը: Սա հատուկ է կրտսեր և միջին նախադպրոցական տարիքի երեխաներին, երբ նրանք փորձում են համագործակցել մեծահասակների հետ, մասնակցություն ունենալ դեպքերի, երևույթների քննարկմանը:

Ավագ նախադպրոցական տարիքում զարգանում է հաղորդակցման ո չ իրադրական-անձնային ձևը, որն ուղղված է երեխայի կողմից սոցիալական աշխարհի, մարդկանց և նրանց փոխհարաբերությունների ճանաչմանը: Հաղորդակցման ձևերն իրականանում են գործունեության առաջատար ձևի՝ խաղի առաջացման ժամանակ:

Գործունեության նոր ձևի ի հայտ գալը և հասակակիցների ու մեծահասակների հետ նոր հարաբերությունների ստեղծումը հանգեցնում են խոսքի գործառույթների ու ձևերի հետագա տարբերակմանը: Մյուս կողմից էլ խոսքը նպաստում է

գործունեության տեսակների, հաղորդակցման ձևերի հետագա զարգացմանը: Եթե մանկան ծնված օրվանից խոսքը կատարում է իր գլխավոր՝ հաղորդակցական գործառույթը, ապա երկու տարեկանից սկզբնավորվում է ճանաչողական ունակությունների ձևավորումը, երբ երեխան սկսում է ճանաչել շրջապատող առարկաները, հայտնաբերել դրանց միջև առկա կապերը: Արդեն նախադպրոցական տարիքում խոսքը հանդես է գալիս որպես վարքի կարգավորման միջոց:

Եվ իմացական գործընթացների, և անձի զարգացման իմաստով մանկությունն իր նշանակալի դերն ունի: Մարդկային գրեթե բոլոր հիմնական հատկությունները, անձնային որակները ձևավորվում են կյանքի այդ տարիներին, բացառությամբ այն հատկանիշների, որոնք ձեռք ենք բերում կենսափորձի կուտակմանը զուգահեռ և չեն կարող դրսևորվել, քանի դեռ մարդը չի հասել որոշակի տարիքի: Յուրաքանչյուր տարիք իր էական ներդրումն ունի անձի զարգացման գործում:

Խոսքը երեխայի զարգացման գործում ունի կարևոր նշանակություն: Խոսքի զարգացումը օգնում է երեխաներին արտահայտելու և մեկնաբանելու իրենց մտքերը, զգացմունքները, գաղափարները, ինչպես նաև արձագանքելու ուրիշների գաղափարներին և գործողություններին:

Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով: Բանավոր խոսքի, հաղորդակցման լավագույն միջոցը զրույցն է: Խոսքը զարգանում է մի քանի խնդիրների լուծումներով՝

- խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում,
- բառապաշարի ձևավորում,
- խոսքի քերականական կառուցվածքի յուրացում,
- կապակցված խոսքի զարգացումը,
- ծանոթացում գեղարվեստական գրականությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրության արդյունքում եզրակացրինք, որ խոսքը լինելով հաղորդակցական գործոն միշտ եղել և մնում է մասնագետների ուշադրության կենտրոնում: Քանի որ բոլոր ժամանակներում ուսումնասիրողների գերագույն խնդիրն է եղել մարդը, իսկ խոսքը մարդու հետ անմիջական կապվածության մեջ է: Անդրադարձանք խոսքի զարգացմանը խթանող գործոններին, միջոցներին: Երեխաների հետ գործնական պարապմունքների արդյունքում կարողացանք հասկանալ խոսքի զարգացմանը խոչընդոտող երևույթները և գործնական կիրառման ժամանակ դրանց չեզոքացման պահանջները: Իրավիճակները հնարավորություն տվեցին ավելի մոտ գտնվել երեխաներին, կենդանի շփման արդյունքում այդ խնդիրները ավելի ակնհայտ դարձան և լուծումներն էլ՝ հնարավոր: Երեխաների հետ աշխատելը բավականին բարդ և պատասխանատու է, հետևաբար պետք է հոգեբանական լուծումներ գտնել արդիական պահանջները ճիշտ ներկայացնելու համար:

Ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալին՝

- Երեխայի զարգացման գրավականներն են նրա խոսքի զարգացումը, լեզվական հաղորդակցումը, շփումն ու փոխազդեցությունը անմիջական միջավայրի՝ շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը և այլն:
- Երեխաների բանավոր խոսքի զարգացման համար մանկապարտեզներում պետք է ստեղծվի այնպիսի իրավիճակ, որ զարգացնի երեխայի խոսքը: Երեխայի խոսքը պետք է կառուցված լինի ճիշտ և գրագետ, ուստի կարևոր է շրջապատող մարդկանց գրագետ, ճիշտ խոսքը:
- Ընտանիքը հասարակության այն հիմնական կառույցն է, ուր ձևավորվում և զարգանում է երեխան: Երեխայի դաստիարակության հիմքերը սերմանվում ու ձևավորվում են ընտանիքում:
- Նախադպրոցական հաստատությունում պարապմուքների ընթացքում երեխայի հետ զրուցելը և երկխոսության մեջ մտնելը դառնում են նպատակաուղղված ուսումնական գործընթացներ:

- Նախքան երեխաների հետ զրույցի և երկխոսության մեջ մտնելը դաստիարակը պետք է երեխաների մեջ ձևավորի լսելու կարողություն, քանի որ սա զարգացվածության չափանիշ է. հնարավոր է երեխան ունենա շատ լավ խոսք, սակայն լսելու կարողությունը բացակայի նրա մոտ:
- Նախադպրոցականի բանավոր խոսքի զարգացման հնարավորությունները ենթադրում են երեխայի մանկապարտեզային կյանքում ստեղծել հաղորդակցության որոշակի իրավիճակներ: Այդ իրավիճակներում հարստանում է բառապաշարը, մտքի արտահայտման եղանակներ են կուտակվում, պայմաններ են ստեղծվում խոսքի ըմբռնումը կատարելագործելու համար:
- Զրույցը պետք է լինի օգտակար և հասանելի: Այն կարելի է համեմել հանելուկներով և բանաստեղծություններով: Խմբային զրույցները նույնպես մեծ նշանակություն ունեն և կարող են ակտիվորեն զարգացնել երեխայի բանավոր խոսքը:
- Երեխաների՝ տարբեր թեմաների շուրջ հորինած պատմությունները զարգացնում են նրանց ստեղծագործական երևակայությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Կ. Բաբանսկի, Մանկավաչժություն, հ. 1, Երևան, 1987:
2. Հատուկ Կրթություն Մեթոդական Տեղեկատու
3. Նախաշավիղ
4. Ժան Պիաժե, Երեխայի խոսք և մտածողություն, Մ.,1994:
5. Ջ. Ֆլեյվելլ, Ժան Պիաժեի գենետիկական հոգեբանություն,Մ., 1967:
6. Ժան Պիաժե, «Երեխայի խոսքը և մտածողությունը» և «Երեխայի դատողությունը և տրամաբանությունը» գրքերի վերաբերյալ Լ. Ս. Վիգոտսկու քննադատական դիտողությունների մեկնաբանությունները // Ընդհանուր հոգեբանության քրիստոմատիա. Մտածողության հոգեբանություն / Խմբ.՝ Յու. Բ. Գիպպենրեյտեր, Պ.Պ Պետուխովա, Մ., 1981:
7. Ս. Ն. Ցեյտլին, Լեզուն և երեխան, Երեխայի խոսքի լեզվաբանություն, Մ., 2000, 240 էջ:
8. https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-08/9917787aee162ab7d7481d64e33614a7.pdf